ՍԵՆԱՏԻ ՕՐԻՆԱԳԻԾ ԹԻՎ 1383 ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹԱՓՈՆԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

ՊԱՀՊԱՆՈ՞ՒՄ ԵՔ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԻՆՉՊԵ՞Ս Է ԱԶԴՈՒՄ ԻՄ ԲԻԶՆԵՍԻ ԿԱՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Բիզնեսներից և բազմաբնակարան շենքերից պահանջվում է.

- Բաժանորդագրվել Burrtec-ի կողմից տրամադրվող վերամշակման և/կամ օրգանական թափոնների հավաքման ծառայությանը: (Հաճախորդը պետք է ձեռք բերի Burrtec-ի կողմից տրամադրվող աղբամանները: Կորստի կամ գողության դեպքում հաճախորդները պարտավորություն են կրում աղբամանի փոխարինման արժեքի համար):
- Տարեկան կտրվածքով տեղեկատվություն տրամադրել աշխատատողներին, կապալառուներին, վարձակալներին և հաճախորդներին՝ վերամշակման, օրգանական թափոնի հավաքման պահանջների և նյութերի պատշաճ տեսակավորման վերաբերյալ:
- Ապահովել, որ աշխատողների, կապալառուների, վարձակալների և հաճախորդների համար հասանելի լինեն համապատասխան քանակի, չափի և հարմար վայրերում տեղադրված աղբամաններ՝ պատշաճ պիտակներով և գույնով:
- Տրամադրել աղբամաններ բոլոր տեսակի թափոնների, այդ թվում՝ աղբի, սննդի մնացորդների և վերամշակվող նյութերի հավաքման համար՝ բոլոր այն տարածքներում, որտեղ հաճախորդների համար նախատեսված են աղբահանության տարաներ, բացառությամբ զուգարանների:
- Տեղեկատվություն տրամադրել նոր վարձակալներին՝ նախքան բնակարան տեղափոխվելը, կամ տեղափոխվելուց հետո 14 օրվա ընթացքում:
- Արգելել աշխատողներին վերամշակվող և օրգանական թափոնը լցնել տվյալ տեսակի նյութերի համար չնախատեսված աղբամանների մեջ:

ՈՐՈ՞Ն ՆՔ ԵՆ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Սուպերմարկետները, մթերային խանութները, սննդի ծառայություններ մատուցողները, առաքողները կամ սննդի մեծածախ վաճառողներն ունեն սննդի վերամշակման լրացուցիչ պահանջներ, ինչպիսիք են.

- Միտումնավոր չփչացնել սնունդը, որը կարող է վերականգնվել սննդի վերականգնման կազմակերպության կամ ծառայության կողմից:
- Պայմանագրային հարաբերություններ հաստատել սննդի վերականգնման կազմակերպության կամ ծառայության հետ՝ ուտելու ենթակա սնունդը վերականգնելու համար, որը կարող է վերաբաշխվել մարդկային սպառման համար:

ԻՆՉՈ՞Ւ Ի Է ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹԱՓՈՆԸ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ

- «CalRecycle» նահանգային գործակալությունը հայտնում է, որ աղբավայրերում օրգանական թափոնները կազմում են Կալիֆորնիայում գեներացվող մեթան գազի 20 տոկոսը, իսկ մեթանի արտանետումների կրճատումն օգնում է պայքարել կլիմայի փոփոխության դեմ:

ՈՒՏԵԼԻ ՍՆՆԴԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ՝ ՍՆՆԴԻ ՎԱՏՆՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ահա մի քանի ձևեր, որոնցով բիզնեսները կարող են նվազեցնել սննդի թափոնները.

- **Պլանավորել և հետևել.** պլանավորեք սնունդը ըստ պահանջարկի, և հետևեք թափոններին՝ բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու համար:
- **Ճաշացանկի կազմում.** ճաշացանկում ներառեք հատուկ ուտեստներ, որոնցում օգտագործվում են պիտանելիության ժամկետի սպառմանը մոտ գտնվող բաղադրիչներ: Հեռացրեք այն ապրանքները, որոնք լավ չեն վաճառվում:
- **Անձնակազմի վերապատրաստում.** վերապատրաստեք անձնակազմին սննդի թափոնները նվազագույնի հասցնելու, ինչպես նաև՝ ջերմաստիճանի պատշաճ կառավարման և սննդի պաշարների ռոտացիայի վերաբերյալ:
- **Սննդի պատշաճ պահեստավորում.** սնունդը պահեք սառնարանում, իսկ հացահատիկների համար օգտագործեք հերմետիկ տարաներ:
- **Հետևել արտադրությանը.** կշռեք սնունդը արտադրության յուրաքանչյուր փուլում՝ արտադրական կորուստը հայտնաբերելու և շտկելու համար:

Սննդի պահանջների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ calrecycle.ca.gov